ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< 10 >> 02 2012թ. N: 07 գ.Գյումրի

ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՆԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2006 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի ԹԻՎ 122 ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի <<բ>> ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգի>> 4-կետի դրույթներով.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1. Ստեղծել հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների կազմման աշխատանքները համակարգող Շիրակի մարզային հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2006թվականի դեկտեմբերի 18-ի <<ՀՀ Շիրակի մարզի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների կազմման աշխատանքները համակարգող հանձնաժողով ստեղծելու մասին>> թիվ 122 կարգադրությունը:

Ա. ԳԻՋԻՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է:

Հավելված
ՀՀ Շիրակի մարզպետի 2012 թվականի
փետրվարի ..10..-ի թիվ ..07.. կարգադրության

ԿԱԶՄ

ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՆԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ԱՇՈՏ ԳԻՋԻՐՅԱՆ	ՀՀ Շիրակի մարզպետ, նախագահ,
ԱԼԲԵՐՏ ՄԱՐԳԱՐՅԱՆ	ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ, անդամ,
ՄՈՎՍԵՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ	ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ, անդամ,
ԿԱՌԼԵՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ	ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ,անդամ,
ՍԱՄՎԵԼ ՄԻՆԱՍՅԱՆ	ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի /մարզային հողային պետական տեսչություն/ պետ, անդամ,
ԺՈՐԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ	ՀՀ քաղաքաշինության նախարարության քաղաքաշինական պետական տեսչության Շիրակի տարածքային բաժնի պետ,
ԱՐՏՅՈՒՇԱ ՄՈՎՍԻՍՅԱՆ	ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանական պետական տեսչության Շիրակի մարզի տարածքային բաժնի պետ, անդամ,
ԼԱՐԻՍԱ ԵԳԱՆՅԱՆ	Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գործակալության Արագածոտնի և Շիրակի մարզերի տարածքային բաժնի պետ, անդամ,
ԱՎԵՏԻՔ ՄԵԼԻՔ-ՍԱՐԳՍՅԱՆ	ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի պատմական միջավայրի պահպանության Շիրակի մարզային ծառայության պետ, անդամ,
ԳԵՎՈՐԳ ՋԱՔԱՐՅԱՆ	ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարության Էներգետիկայի պետական տեսչության հյուսիսային միջմարզային բաժնի պետ, անդամ,
ՋԻՎԱՆ ԱՍԼԱՆՅԱՆ	ՀՀ գյուղատնտեսության նախարարության <<Շիրակի գյուղատնտեսական աջակցության մարզային կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրեն, անդամ,
ԱՐՄԵՆԱԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ	ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Շիրակի մարզային ստորաբաժանման ղեկավարի տեղակալ, անդամ: